ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<_____>> _____**2020թ.** **N** ---------- **Ֆաքս/374010/ 28 18 32**

«ԱՆՏԻՖԵՅՔ.ԱՄ» ԿԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ
ԽՄԲԱԳԻՐ ՏԻԿԻՆ ԱՍՏՂԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մաթևոսյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2020 թվական փետրվարի 11-ին հասցեագրված թիվ 039-20 (մտից փաստաթուղթ թիվ 1026) Ձեր հարցման՝ ներկայացնում ենք, հետևյալը.

Հարցմամբ պահանջվում է տեղեկատվություն՝ մարզպետարանի աշխատակիցներ Նարեկ Մարտիրոսյանի և Անի Մխիթարյանի վերաբերյալ: Ն. Մարտիրոսյանին և Ա. Մխիթարյանին ծանոթացրել ենք հարցման բովանդակությանը, նրանց բացատրվել են իրենց իրավունքներն ու պարտականությունները և ստացել ենք նրանց գրավոր անհամաձայնությունը՝ իրենց անձնական տվյալները հրապարակելու համար: Պատճառը Ձեր կայքում https://antifake.am/am/news/ 1190?fbclid=IwAR0UXiAtkGzJFiiIWzALEFEbLexOvc7mjaUux2QmT49IoyNh9zBaVG52bfE հղմամբ, առանց նախապես ճշտելու, տեղեկություններ տեղադրելն է, որոնք, ըստ Ն. Մարտիրոսյանի և Ա. Մխիթարյանի, ապատեղեկատվություն են, չեն բարձրանում բամբասանքի մակարդակից և խախտում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության ու անձնական տվյալների պաշտպանության ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և դուրս են լրագրողական էթիկայի կանոններից, ուստի Ձեր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չենք կարող տրամադրել:

Միաժամանակ կոչ ենք անում Ձեր աշխատակիցներին հանձնարարել պետական կառույցների հետ շփումներում առավելագույնս պահպանել էթիկայի կանոնները, դուրս չգալ քաղաքավարության սահմաններից և պետական պաշտոնյաների հետ շփվելիս ընտրել ճիշտ արտահայտություններ:

2/13/2020

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ն. Մաղաքյան, հեռ. (0281) 2 55 95